

1.2.2. Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2006թ. հունվար-հունիսին, ընթացիկ գներով, բոլոր համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7638 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի նախնական տվյալներով, կազմել է 118.9 մլրդ.դրամ, որը 2005թ. նույն ժամանակաշրջանի մակարդակը գերազանցել է 7.2 %-ով: 2006թ. հունիսի համախառն արտադրանքը, համադրելի գներով, կազմել է 2006թ. մայիսի 168.4 %-ը:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքն ըստ ճյուղերի, ունի հետևյալ պատկերը. բուսաբուծության համախառն արտադրանքը կազմել է 36818.2 մլն. դրամ, որը գերազանցել է 2005թ. նույն ժամանակաշրջանի մակարդակը 12.6 %-ով, իսկ անասնաբուծության համախառն արտադրանքը կազմել է 82132.4 մլն. դրամ, որը գերազանցել է 2005թ. նույն ժամանակաշրջանի մակարդակը 5.0%-ով:

Հանրապետությունում ընթանում են գյուղատնտեսական մշակաբույսերի բերքահավաքի աշխատանքները: Օպերատիվ տվյալներով 01.07.2006թ. դրությամբ, գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի համախառն բերքը գերազանցել է 2005թ. նույն ժամանակաշրջանի մակարդակը: Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի համախառն բերքն ավելացել է 1.4 հազ. տոննայով կամ շուրջ 5.7 անգամ, բանջարանոցային մշակաբույսերինը՝ 9.7 հազ. տոննայով կամ 43.3 %-ով, կարտոֆիլինը՝ 6.3 հազ. տոննայով կամ 22.7 %-ով, պտղի և հատապտղինը՝ 6.3 հազ. տոննայով կամ 17.3 %-ով, կերային մշակաբույսերինը (կուտակված խոտ)՝ 28.1 հազ. տոննայով կամ 55.9 %-ով:

Անասնաբուծական մթերքի արտադրությունը հանրապետությունում, ըստ մարզերի

(հաշվարկային տվյալներ)

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով) ¹ , հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2006թ. հունվար-հունիս	2006թ. հունվար-հունիսը 2005թ. հունվար-հունիսի նկատմամբ, %	2006թ. հունվար-հունիս	2006թ. հունվար-հունիսը 2005թ. հունվար-հունիսի նկատմամբ, %	2006թ. հունվար-հունիս	2006թ. հունվար-հունիսը 2005թ. հունվար-հունիսի նկատմամբ, %
ք.երևան	0.2	100.0	1.9	100.0	12.9	58.9
Արագածոտն	4.7	114.6	38.0	108.9	10.4	80.6
Արարատ	3.8	115.2	24.6	108.8	16.4	80.8
Արմավիր	4.4	95.7	21.3	108.7	15.1	77.8
Գեղարքունիք	6.8	115.3	58.5	108.7	16.6	81.0
Լոռի	4.3	113.2	38.8	109.3	11.5	89.8
Կոտայք	4.5	115.4	33.9	108.7	94.8	84.6
Շիրակ	6.0	115.4	49.3	108.8	15.4	80.6
Սյունիք	3.3	110.0	28.0	108.9	5.9	80.8
Վայոց ձոր	1.5	115.4	12.5	109.6	4.9	79.0
Տավուշ	3.3	117.9	22.6	108.7	8.3	80.6
Ընդամենը ՀՀ	42.8	112.3	329.4	108.8	212.2	80.7

¹ Ներառյալ ներքին սպառումը:

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

2006թ. հունվար-հունիսին 2005թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, անասնաբուժական հիմնական մթերքի արտադրության ծավալները, բացառությամբ ձվի ծավալից, ավելացել են: Այսպես. սպանդի համար իրացված անասնի և թռչնի ծավալը գերազանցել է 2005թ. նույն ժամանակաշրջանի մակարդակը 4.7 հազ. տոննայով կամ 12.3%-ով, կաթինը՝ 26.7 հազ. տոննայով կամ 8.8 %-ով:

Գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող առևտրային կազմակերպությունների կողմից արտադրված գյուղատնտեսական արտադրանքի ծավալներն ըստ աշխատողների թվաքանակի որոշվող չափերի 2006թ. հունվար-հունիսին

	Կազմակերպությունների քանակը, միավոր	Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, մարդ	Թողարկված գյուղատնտեսական արտադրանքի ծավալը, մլն. դրամ	2006թ. հունվար-հունիսին թողարկված գյուղատնտեսական արտադրանքի ծավալը, 2005թ. հունվար-հունիսին նկատմամբ, %
Ընդամենը <i>այդ թվում՝</i>	87	1976	5888.3	78.6
մինչև 5 մարդ	45	108	45.1	155.5
6-50 մարդ	37	770	537.5	82.9
51-100 մարդ	-	-	-	-
101 և ավելի	5	1098	5305.7	77.9